Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ՇՑ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 8. Շիրակ - ցերեկային կենտրոն(Գյումրի, Արթիկ) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025 -30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 48 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 10 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուշադրության կենտրոնացման, մենթալ ֆունկցիաների ակտիվության պահպանման, ստեղծագործական եւ վերլուծական մտածողության աջակցման, հույզերի բացահայտման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ գրական, խոհարարական, ձեռագործություն և շյուղագործություն, առողջ ապրելակերպ, որոնց մասնակցել է թվով 48 շահառու:
  Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է թվով 48 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ «Տարիքն իմ ուժն է, ոչ թե սահմանը» թեմայով միջոցառում, Տարեցների միջազգային օր, միջոցառում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից, այց «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան, էքսկուրսիա դեպի Հայաստանի հոգեւոր մշակութային վայրեր՝ Հաղպատ եւ Սանահին վանական համալիրներ, Ամանոր, հանդիպում քահանա Տեր Մակարի հետ (3 անգամ):
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 40 հանդիպում՝ ուղղված շահառուների մանր մոտորիկայի ակտիվացմանը, հիշողության զարգացմանը, մենթալ ֆունկցիաների ակտիվության պահպանմանը, ստեղծագործական եւ վերլուծական մտածողության աջակցմանը, հույզերի բացահայտմանը, մասնակիցների թիվը՝ 47:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 2 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/lwnqld, https://surli.cc/djxlvc, https://surl.li/ridjjg),
- «Տարիքն իմ ուժն է, ոչ թե սահմանը» թեմայով միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/eghesg),
- Էքսկուրսիա դեպի Հայաստանի հոգևոր մշակութային վայրեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lt/stwshf),
- Այց «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/hggvym, https://surl.li/brytkt),
- Հանդիպում քահանա Տեր Մակարի հետ (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/kxqqfg, https://surl.li/aelger),
- Միջոցառում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.lu/jmfefj, https://surl.li/ukmimy),
- Ամանոր (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/rabitn, https://surl.li/gnyjhj, https://surl.li/psdowp, https://surli.cc/quwvmq):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողն ու հոգեբանը մասնակցել են.

- ✓ «Էմիլի Արեգակ» կենտրոնի կողմից կազմակերպած «Անցած ճանապարհ եւ խոստումնալից վաղը» միջոցառմանը,
- ✓ «Ագաթ» ՀԿ-ի կողմից կազմակերպած Գյումրիի առաջին ներառականության պատի ստեղծման միջոցառմանը,
- ✓ «Ալցհայմերի խնամք Հայաստան» կազմակերպության հիմնադրման ութամյակին նվիրված միջոցառմանը,

- ✓ PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարական մոտեցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
- ✓ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից իրականացրած ֆոկուս խմբային քննարկմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 48/48 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 32 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 3 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 37 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 47 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 5.1 | Գրական | 25 |
| 5.2 | Խոհարարական | 13 |
| 5.3 | Առողջ ապրելակերպ | 38 |
| 5.4 | Ձեռագործության և ջուլհագործության | 6 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 16 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն<br>Լվացքի ծառայություն | <br>10<br>2 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «18» 12. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)